

ՇԱՄԻՐԱՄԻ ԱՆՏԻԿ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆԻ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ԽԵՑՆՂԵՆԸ (1981—1987 թթ. պեղումներ)

Շամիրամի անտիկ ժամանակաշրջանի բնակավայրը գտնվում է Աշտարակի շրջանի համանուն գյուղի մոտ: Այն զբաղեցնում է հրվանդանաձև հարթության վրա գտնվող վաղ երկաթեդարյան ֆալամտեղիի տարածքի վերջնամասը: Քաղաքատեղի-ամրոցի պաշտպանական համակարգի ծորից ծոր ձգվող 5-րդ պարիսպն անտիկ բնակավայրը բաժանում է երկու անհավասար հատվածները (նկ. 1, բնակավայրի հատակագիծը): Հարավարևմտյան մասը կազմում է բնակավայրի ավելի մեծ և խիտ կառուցապատված հատվածը:

Վերջին երկու տարիների ընթացքում հետախուզական պեղումներ են կատարվում Արագածի հարավային ճախայեռնային գոտու, Շամիրամից ոչ հեռու գտնվող անտիկ ժամանակաշրջանի մի ֆանի ոչ ֆաղաֆային բնակավայրերում (Կոչ, Քալին, Բազմաբերդ—1, Բազմաբերդ—2, Արտաշավան): Զուգահեռ կենդանացվեն նաև այդ բնակավայրերից ի հայտ եկած խեցեղենի նմուշներ:


Երկա հաղորդման նպատակն է ներկայացնել Շամիրամի անտիկ բնակավայրը խեցեղենի հիմնական տիպերը և ենթատիպերը, Սովետական Հայաստանի տարածքում հայտնի անտիկ ժամանակաշրջանի հուշարձանների զուգանուններով առլ դրանց ճախանկան թվագրություներ:

ԿԱՐԱՍԵՆՐ (աղ. 1) — Ամրոցական օրրակներ շեն գտնվել: Կարասների տարողության ու չափսերի մասին կարելի է պատկերացում կազմել միայն պսակների և մասամբ պահպանված իրանի հատվածների քեկորների հիման վրա: Ըստ այդ ուղյակների՝ Շամիրամը անտիկ բնակավայրի կարասները կարելի է բաժանել երկու մասի՝ մեծ և ոչ մեծ չափսերի, որոնք համապատասխանաբար ունեն 35—50 սմ և 25—30 սմ տրամագծով պսակներ: Խոշոր կարասների պսակները և պահպանված մյուս հատվածները առանձնանում են նաև զանգվածայնությամբ և տարբերվում են իրարից շրթերի, վզիկների ու բրանի ձևերով և գույնով: Քմբիկավոր շրթերով մեծ կարասների օտուցիկ իրանը, որպես կանոն, սկսվում է անմիջապես պսակի տակից (աղ. 1, 3, 4, 10): Հորիզոնական շրթերով կարասները ունեն թեթև-

կի արտանայված վզիկ, իսկ իրանը պակաս ուռուցիկ է (աղ. 1, 2, 5, 6, 8): Այս խումբը, հատկապես հորիզոնական շրթերով կարասները, աչքի են ընկնում խեցու բեկորների բարձրակ մշակումով և ամրությամբ, հիմնականում դարչնագույն կամ կարմրավուն են, հազվադեպ հանդիպում են նաև գորշ կամ սև գույնի կարասների քեկորներ: Հորիզոնական և քմբիկավոր շրթերով կարասների միջև նկատված տարբերությունները, հատկապես օտուցիկների խեցու ամրությունը և բարձր որակը թույլ են տալիս ենթադրելու նաև դրանց օգտագործման տարբեր բնագավառների մասին (հավանաբար օտուցիկներն օգտագործվել են հեղուկ նյութեր, հիմնականում գինի պահելու համար):

Շամիրամի անտիկ բնակավայրը խեցեղենի պահպանված միայն պսակների, մասամբ իրանի վերին հատվածների քեկորները որոշ դրվարություններ են առաջացնում ըստ պսակների տրամագծերի ոչ մեծ կարասների և լայնաբերան, խոնավոցային կնունների տարբերակման համար, թեև վերջիններս աչքի են ընկնում մի ֆանի բնորոշ առանձնահատկություններով: Ոչ մեծ կարասների պսակները առանձնանում են մեծ կարասներին նմանվող հիմնական հատկանիշներով՝ զանգվածայնությամբ, բարձրակ մշակվածությամբ և ամրությամբ, պսակների, վզիկների և իրանը ընդհանուր ձևերով, թեև այս խմբի կարասների պսակները ունեն որոշ շեղումներ՝ ավելի բազմազան են (աղ. 1, 7, 9, 11, 12, 13, 14, 15) և գույնով: Մի ֆանի քեկորներ կրում են կարմիր ներկի հետքեր (աղ. 1, 16): Իրանը կարմրավուն քեկորների վրա հանդիպում են թեթևակի: օտուցիկ, նեղ պարեգտիներ, զարչնագույն կամ մուգ քեկորների վրա՝ փորագիր զարդեր: Քվարկված բոլոր հատկանիշներով են բնորոշվում նաև Շամիրամին հարակից Արագածի հարավային ճախայեռնային գոտու ոչ ֆաղաֆային բնակավայրերի կարասները, որոնք ակնհայտորեն առնչվում են Հայաստանի և հարևան շրջանների անտիկ ժամանակաշրջանի մյուս հուշարձաններից հայտնի օրինակներին:

1 Г. А. Тирация. Древнеармянская ке-




ԿՃՈՒՃՆԵՐ (աղ. 11) — Շամիրամի անտիկ բնակավայրի պեղումներից ի հայտ եկած խեցեղենի մեջ ամենատարածված նյութը խոհանոցային նշանակությամբ կեռուններ և պոլիկներ

рамка из раскопок Армавира, Историко-филологический журнал (ИФЖ), 1971, № 1, табл. II, 3. 9. Տիրացյան, Ի. Կարապետյան, Արմավիրի 1977—78 թթ. պեղումները, «Պատմա-բանասիրական հանդես» (այսուհետև՝ ՊՔ2), 1979, № 3, էջ 259, Ի. Կարապետյան, Կարեղրյուրի պեղումները (1975—78 թթ.), ՊՔ2, 1979, № 3, աղ. 1, 3, 4, 5, Ժ. Խաչատրյան, Արտաշատ 2., Եր., 1981 թ., էջ 96, նկ. 30.5, 40.6 և այլն:

են, որոնք ունեն ձևերը մեկ հիմնական ընդհանրություն՝ դուրս և վեր քեփված շրթով լայն պսակ, կարճ վզիկ, հիմնականում ուռուցիկ, լայն իրան, լայն և հարթ հստակ: Առանձնաձևում են նաև խեցու ոչ բարձր օրակով և զույնով (գորշավուն, հազվադեպ՝ դարչնագույն): Ճնշող մեծամասնությունը միի հետեքով և շերտաբյուրեցի ֆայֆայված են: Հայտնի է այս խմբի կավանքների ձևերի և նշանակությամբ պահպանողականությունը²: Պատմական չէ, որ նման կավանքների բեկորներ գտնվում են ինչպես Շամիրամի ֆաղաֆատեղիի, այսպես կա-

² Գ. Ա. Կիրազյան. Древнеармянская керамика..., стр. 216.



ված՝ «մաֆու» ուշ-բրոնզի կամ վաղ-երկաթի ժամանակաշրջանների, այնպես էլ անտիկ շերտից:


Խեցեղենի խիստ բեկորային վիճակը թույլ է տալիս հաստատագրելու Շամիրամը բնակավայրում գտնված այս խմբի կավանոթների միայն անկանք օրինակներ, թեև առանձին գտնված կանթեր կարող են վերաբերել այս անոթներին (աղ. II, 13):

Ընդհանուր ձևով և նշանակությամբ խիստ բազմաժամանակյա այս կավանոթների որոշ օրինակներ, այնուամենայնիվ, անտիկ ժամանակաշրջանում տարբերակվում են արտաբն հարդարման որոշ առանձնահատկություններով: Շամիրամից և ոչ նեոու գտնվող անտիկ բնակավայրերից գտնված մի քանի նմուշներ պսակի կամ իրանի վրա կրում են կարմիր ներկի

նետներ, որոշ բեկորներ անգորպպատ են: Վերջիններս չեն կրում մրի կամ շերմությունից ֆայֆայման նետներ:

Խոհանոցային նշանակության այս խմբի կավանոթների մեջ առանձնանում են ուղղահանյաց պատերով, հարթ և լայն հատակով, թեթևակի արտաճայտված շրթով լայնաբերան կնունները, որոնք առանց բացառության մրի կամ շերմության հետեբերով են (աղ. II, 17): Տարբեր ժամանակաշրջաններում գոյություն ունեցած և բիշ փոփոխություններ կրած խոհանոցային կավանոթների այս տիպն ի հայտ է գալիս նաև Կոշի, Արտաշավանի, Քալինի անտիկ շերտերից և անընդմեջ է նաև վաղ միջնադարյան Կաթնաղբյուրի եյուրերին (Կաթնաղբյուրի խեցեղենը առայժմ հրապարակված չէ):

ՍԱՓՈՐՆԵՐ (աղ. II) — Հանդիպում են




կտրավուն պսակով, եկերավիզ, ոտուցիկ իրանով, հարթ և նեղ հատակով, անկանք սափորների բեկորներ (աղ. III, 7) Մասն հիմնականում պատրաստված են գորշավուն կավից, իրարից տարբերվում են պսակների տրամագծով: Որոշ օրինակներ իրանի վերին մասում կրում են մեկ կամ երկու փորագիր, իրար զուգանո պարեգոտիներ (աղ. III, 7) Համեմատաբար նեղ և երկար վզիկով, ոտուցիկ իրանով, անկանք շամիրամյան սափորների նման օրինակները հաջողվեց գտնել միայն «Ջախարի

բերդ»-ի և լցավանի վաղ միջնադարյան նյութերում³, թեև Հալկական լեռնաշխարհի նյութաային շրջաններում և Վրաստանում դրանք թվագրվում են ներլեհիստական և ավելի վաղ ժամանակաշրջաններով⁴: Նույնատիպ արտաբի-

³ Գ. Ա. Տիրացյան, Հացավանի ամրոցի 1963—65 թթ. պեղումների նյութերից, ՊՔՀ, 1968, N 1, էջ 287

Ս. Օ. Давлианидзе. Культура Квемо-Картли (Триалети) во второй половине I



ճով ապակյա սափորներ հայտնի են Գառնիի մ. Բ. ա. 1—2-րդ դդ. քաղցումներից⁵:

Շամիրամում ավելի հաճախ հանդիպում են համեմատաբար լայն պսակով և ոչ այնքան երկար վզիկով սափորներ, որոնց անկանք և կանրով օրինակները հայտնի են Սովետական Հա-

յաստանի և հարակից շրջանների անտիկ հուշարձաններից: Շամիրամում գտնվել են այս խմբի կավանոթների միայն պսակների ու վզիկների բեկորներ, և այդ պատճառով դժվար է խոսել կանթի կամ կանթերի առկայության մասին: Բացառված չէ, որ Շամիրամի՝ նման սափորները կանթեր ունենային վզիկից ներքև, իրանի վերին հատվածում: Նման սափորներ հայտնի են մյուս հուշարձաններից⁶:

Կ. Մ. Գագոշիձե, Тбилиси, 1983, т. XV, 9; Ю. М. Гагошидзе, Самадло (каталог), т. XVIII, 700, т. LV, 803.

⁵ Б. Н. Аракелян, Гарни, II, Ер., 1957, стр. 65, рис. 37.

⁶ ժ. Գ. հաշատրյան, Արտաշատ-2, էջ 41, նկ. 13, նր., 1981 թ.:

Սափորենի մյուս տեսակը, որ հանդիպում է Շամիրամում, սրափք ծորանով օրինակն է (գտնվել է կարմրավուն, անգորապատ պսակի բեկոր, աղ. 20): Երեֆեուկանն պսակով սափորենի կամ օյնոխոյանների այս տարատեսակը իսխտ տարանջատված է Հայաստանի անտիկ հուշարձաններում⁷: Հանդիպում են հիմնականում կարմրավուն կամ դարչնագույն կավից պատրաստված, յավ բրձված, երբեմն նաև գունազարդ օրինակներ: Ի տարբերություն օյնոխոյանների, պատրաստման ժամանակ նկվել է պսակի եզրային փոփոխություն: Շամիրամից, ինչպես նաև Կոչից, Քալինից (աղ. VI, 10) գտնված օրինակները ավելի սերտ առնչվում են արմավիրյան տիպերին⁸:

Շամիրամի անտիկ բնակավայրում գտնված սափորենները չեն սահմանափակվում թվարկված ձևերով: Այդ մասին են վկայում հայտնաբերված բազմաթիվ կանթեր, որոնց մի մասը վերաբերում է անտիկ հուշարձաններից ի հայտ եկած սափորենի ձևերին: Այսպես, կենդանակերպ արտաֆինով կանթը, որ ուղառական ժամանակաշրջաններից հարատևող օրինակ է, անհնայն հավանականությամբ պատկանում է անտիկ հուշարձաններից հայտնի երկկանթ, գեղեցիկ սափորենին (աղ. III, 11)⁹: Կտրվածքում օվալաձև, կարմիր անգորապատ, վզրիկի հետ գտնված կանթը վերաբերում է մեկ կամ երկկանթ կլոր սափորենին, որ նույնպես տարածված օրինակներ են (աղ. III, 9): Սրանք հայտնի են նաև Շամիրամին մոտ գտնվող անտիկ բնակավայրերից (Կոչ, Քալին, աղ. VII, 15, աղ. IX, 17): Գտնվել է նաև կտրվածքում օվալաձև, աղեղճաձև կանթեր, որոնց վերին մասը բարձրավուն է անմրջապես պսակի ծավալածից (աղ. III, 13, 14): Որոշ դեպքերում սրանք վերին մասում ունեն կոնականման դրոշմ (աղ. III, 10): Խիստ տարածված են նաև պսակի եզրից սկսվող, կտրվածքում կլոր, կարմիր անգորապատ կանթեր (աղ. III, 15), որոնք հայտնի են նաև Շամիրամից ոչ հեռու գտնվող հուշարձաններում (Կոչ, Արտաշատյան, Քալին, աղ. IX, 11, 13): Դատելով Հայաստանի և հա-

րևան շրջանների նյութերից, դրանք պատկանել են երեֆեուկանն կամ կլոր պսակով, ուսուցիկ իրանով սափորեններին¹⁰:

ՔՐԵՂԱՆՆԵՐ՝ (աղ. IV) — Շամիրամում, Արագածի հարավային եռալանդանային գոտու ոչ ֆաղաֆային բնակավայրերում գտնված օրինակներն անհնայն կավաճառների տեսակներից են: Ցարերվում են իրարից շափսերով, գույնով և շրթերի ձևերով: Հիմնական բնույթը արտաֆին առանձնահատկությունն իրանի դեպի ներս հակավածությունն է և թեթևակի դուրս արտահայտված կարավուն կամ հորիզոնական շրթի տակ գտնվող գոտևորող փոստակը: Մեծ մասամբ դարչնագույն են, կարմրավուն կամ գորշ, որոշ դեպքերում պսակը դրսից և ներսից ներկված է կարմիր անգորով: Հանդիպում են նաև ծորակով ֆրեղաններ, նման Կարեաղբյուրի և Արմավիրի օրինակներին¹¹ (աղ. IV, 2, 16): Հարկ է նշել, որ ֆանակական տեսակներից, ի տարբերություն փոփոխ-ինչ հյուսիս և մի գծի վրա գտնվող անտիկ բնակավայրերի (Կոչ, Բազմաբերդ—1, Բազմաբերդ—2, Քալին), Շամիրամում ավելի քիչ են հանդիպում կարմրավուն կամ անգորապատ օրինակներ: Այս հանգամանքը բնույթ է նաև կավաճառների մյուս տեսակներին:

Իրենց արտաֆին ձևերով առանձնանում են Շամիրամում և շրջակա անտիկ բնակավայրերում գտնված խորը, լայնաբերան ֆրեղանների բեկորները, որոնց պսակի տակ, դրսի կողմից առաջացած խորը ակոսի հետևանքով ստացվել է կավանոթի իրանի վերին մասը գոտևորող բրմափակվոր ուս (աղ. IV, 9, 47): Քրեղանների այս ձևը բնույթ է Հայաստանի անտիկ հուշարձաններին¹²: Իր մեծ շափսերով առանձնանում է կարմրավուն, փոփոխ-ինչ ուղղանկյալ պատերով, № 3 բաղունից գտնված ֆրեղանը (տր. 40 սմ աղ. IV, 12): Անսրկ ժամանակաշրջանի հուշարձաններին բնույթ են նաև ծորակավոր ֆրեղանները: Շամիրամում գտնվել են երեք հատ կարմիր անգորապատ, փոփոխ ֆրեղանի և հաստախլցի, գորշավուն կավից բրձած, դուրս ցցված խողովակաձև ծորակով ֆրեղանների բեկորներ (աղ. IV, 2, 16):

ԱՓՍՆԵՆԸ — Շամիրամի այս խմբի կավաճառները հիմնականում պատրաստված են քարձ-

⁷ Ժ. Գ. Խաչատրյան, Հայաստանում գրտերված գունազարդ խեցեղենի մի ֆանի նմուշներ, ՊՔՀ, 1966, էջ 254: Ա. Օ. Давланидзе.

Культура Квемо-Картли... табл. XII, 5. 6; Д. А. Халилов. Раскопки городища Хыные-лы, памятника древней Кавказской Албании. «Советская Археология», 1962, №1, рис. 2. 5 նույնի Атропатена, в кн. Археология СССР, т. IV, стр. 105, табл. LVII, 5. 6, М. 1985.


⁸ Г. А. Тирациян. Древнеармянская керамика... табл. I, 2

⁹ Ի. Կարապետյան, Կարեաղբյուրի պեղումները (1975—78 թթ.), ՊՔՀ, 1979, № 3, էջ 274, աղ. 3, նկ. 7.

¹⁰ Г. А. Тирациян. Древнеармянская керамика... стр. 217, табл. I, 2, Ж. Д. Хачатрян. Гарни—V Античный некрополь, табл. XXIV, 2.

¹¹ Ի. Կարապետյան Կարեաղբյուրի պեղումները, աղ. II, 4, 9. Տիրացյան, Արմավիրի 1973 թ. պեղումները, ՊՔՀ, 1974, № 3, էջ 175:

¹² Г. А. Тирациян. Древнеармянская керамика... табл. I, 12. Ի. Կարապետյան, նշվ. աշխ., աղ. I, 12 և այլն:




բորակ, լավ հունցած կավից. մեծ մասամբ կարմրավուն են կամ անգորպպատ, հազվադեպ հանդիպում են գունազարդ բեկորներ: Հրմնական բնորոշ առանձնահատկություններն են՝ ոչ մեծ խորությունը, հարթ հատակը և իրանի փոլածությունը (աղ. V, 6, 11, 12): Հահախակի են գտնվում նաև Շամիրամին հարևան անտիկ ժամանակաշրջանի հուշարձաններում (աղ. VI, 9): Հանդիպում են նաև ափսեների խիստ փոլած օրինակներ (աղ V, 4, 6): Բնորոշ են նաև օղակավոր ուր-նստուկով ափսեները, որոնք իրենց զուգահեռներն ունեն մ. թ. 1—3-րդ

դդ. խեցեղենում¹³ (աղ. V, 16, 17, աղ. VI, 16 աղ. VII, 18)

Մեծ ԹԱՍԵՐ (աղ V, 1, 2, 5, 7, 13, 25) — Ափսեները տարբերվում են պասլի համեմատաբար փոքր տրամագծով, փոքր-ինչ ուղղահայաց պատերով և ավելի մեծ խորությամբ: Հորիզոնական կամ կլորավուն շրթի տակ, դրսի կողմից առկա է սլասկը իրանից գատուղ փոստրակ-պարեզոտի: Հանդիպում են նաև առանց

¹³ ժ. Ե. Խաչատրյան, Արտաշատ-2, էջ 108:



փստորակ-պարեգոտու, բեթևակի կլորացող, ուղղանյաց դեպի դնուս և ներս արտանայտված հորիզոնական շրթով բասեր (աղ. V, 7): Մի դեպքում հորիզոնական շուրթը զարդարված է սև ներկով արված եռանկյունիներով: Շամիրամում ավելի հաճախ հանդիպում են գորշավուն, բայց ամուր և լավ թրծված, փայլեցված բեկորներ: Հարևան անտիկ հուշարձաններում (Քալին, Կոչ, Բագմաբերդ, Արտաշավան) գերակշռում են կարմրավուն կամ կարմիր անգորպապտ օրինակները (աղ. VII, 9, աղ. VIII, 13):

ՔԱՍ-ՓԻԱՒԱՆՆԻՐ (աղ. V, 9, 10, 14, աղ. VI, 6) — Ուրարտական ժամանակաշրջանից հարատևող կավանոթների օրբնակ է¹⁴: Շամիրա-

մում և հարևան հուշարձաններում հանդիպում են ինչպես կարմիր, այնպես էլ գորշավուն բեկորներ: Բայց դեպքերում այդ բեկորները ներթախեցի են և ամուր:

ԳԱՎԱԹՆԻՐ (աղ V, 20, 21, 22, 23) — Շամիրամում և շրջակա անտիկ բնակավայրերում գտնվել են շրթերի և իրանի բեկորներ, որոնք կարմրավուն են, լավ փայլեցված և ամուր: Որոշ դեպքերում դրանք իրենց վրա կրում են սև ներկով արված գեղեցիկ զարդեր (ալիքաձև գծեր, շերտեր, վանդակազարդ նախշեր և

рамика... табл. I, II, его же Урарту и Ар-
 мения. К вопросу о преемственности мате-
 риальной культуры.—«Вестник обществен-
 ных наук», 1968, № 2, стр. 17.

¹⁴ Г. А. Тирацян. Древнеармянская ке-

այլն)։ Վերջիններս բնորոշ են Հայաստանի հելլենիստական ժամանակաշրջանի օրինակներին¹⁵։ Գտնված փոփոխված թվերները հնարավորություն չեն տալիս հզգերի վերականգնել գավաթների արտադրողներին։ Միայն մի քանի օրինակներ հատկապես նմանվում են մյուս հույարձաններից հայտնի կիսագնդան թասերին։

ՏԱՓԱՇՇԵՐ (աղ. III, 16, 17, 18) — Շամիրամում մեկ ամբողջական տափաշիչ է գտնվել 5-րդ պարսպից արևմուտք գտնվող ֆարադկային թաղամասից։ Բնակավայրից գտնվել են միայն թեկուրներ։ Ե՛վ ամբողջական տափաշիչը, ե՛րբ թեկուրները դարձնազույն են, համեմատաբար մեծաբար ու ամուր խնցրով և կրում են կարմիր ներկով արված համակենտրոն, իրար զուգահեռ գաթիներ (աղ. III, 16, 17)։ Մի թեկուր վրա այդ գաթիներն ընդհատվում են ուղղանկյան հոծ գծերով (աղ. III, 18)։ Կողերին կլոր կանթերով ամբողջական տափաշիչի մի կողմը փոփոխվել է հարթ է։ Ջուր կամ գինի տեղափոխելու համար օգտագործվող այս կավաճաթները լայն տարածում են ունեցել անտիկ աշխարհում։ Ջուրդարված կամ առանց զարդի, ուռուցիկ կամ մի կողմը հարթ տափաշիչը հանդիպում են Սովետական Հայաստանի անտիկ բոլոր հույարձաններում՝ Արմավիրում, Արտաշատում, Կարենաղբյուրում, ինչպես նաև Արագածի հարավային նախալեռնային գոտու մյուս ոչ ֆաղափային բնակավայրերում։

ՔՐՄԱՇՇԱՎԵՐ — Ի տարբերություն Հայաստանի մյուս հույարձանների, Շամիրամի անտիկ բնակավայրում հանդիպում են միայն մի տեսակի ճրագներ՝ փոփոխ, կոպիտ մշակված, մի կողմում փոփոխի ֆրիկով (աղ. III, 20)։ Հետաքրքիր է Կոչից գտնված, սկանակի ռոտ հիշեցնող, բայց միանգամայն ավարտուն, կավի իրը, որը հավանաբար ձիթաճրագ է։ Նման ձիթաճրագներ հայտնի են հյուսիս-սեծովյան անտիկ հույարձաններից¹⁶։

Շամիրամում և շրջակա հույարձաններում, ինչպես նաև մյուս անտիկ հույարձաններում հաճախ գտնվում են հաստախնցի, կոպիտ մշակում ունեցող ուղղանկյան, ոչ բարձր պատերով, հաստակզծում ուղղանկյունաձև կավամաններ (աղ. III, 19)։ Անկյուններն ուղիղ են կամ կլորավուն։ Համարյա առանց բացառու-

թյան այդ իրերը շերտաբանության խիստ փայլաված տեղ ունեն, այսինքն՝ դրվել են կրակի վրա, հավանաբար հաց թխելու կամ որևէ մթեր տափանցելու կամ տապակելու համար։ Ց. Տեր-Մարտիրոսովը դրանք համարում է շարժական թավեր¹⁷։ Հավանական է, որ դրանք օգտագործվել են նաև որպես կարժական օջախներ, քանի որ Շամիրամում և հարևան բնակավայրերում դրանք գտնվում են այն սենյակներում, որտեղ բոլորի կամ օջախի հետքեր չեն հայտնաբերվել։ Հատկապես առատորեն հանդիպում են Շամիրամից ոչ հեռու գտնվող վաղ միջնադարյան «Ջաֆարի բերդ» (Կաթնաղբյուր) բնակավայրում, որտեղ ընդհանրապես ոչ մի հատ թանիչ չի բացվել։

Ներկայացված խնցրի մասին շատ թեմիչ ամբողջական պատկերացում կազմելու համար անհրաժեշտ է հնարավորապես սահմաններում որոշ դիտարկումներ կատարել ուսումնասիրվող ոչ ֆաղափային բնակավայրերի շերտագրական կառուցվածքի մասին¹⁸։

Մինչև 1983 թ. պեղումներ ենթադրվում էր, որ Շամիրամի անտիկ բնակավայրը զբաղեցնում է վաղերկաթեդարյան ամբողջ-ֆաղափային միայն A հատվածը (նկ. 1), այսինքն՝ 5-րդ պաշտպանապետի պարսպից ներս ընկած տարածքը։ 1983 թ. 4-րդ և 5-րդ պարսպների միջև կատարված հետախույզական պեղումները (շերտագրական տեղամաս)¹⁸ պարզեցին անտիկ ժամանակաշրջանի բնակավայրի հետքեր նաև այս հատվածում։ Բնակավայրի հիմնական հատվածում (A) շերտագրական պատկերը հետևյալն է։ Անտիկ ժամանակաշրջանում այստեղ համարյա ամբողջապես մաքրվել են վաղերկաթեդարյան կառույցների մնացորդները, միայն տեղ-տեղ հայտնաբերվում էին այդ ժամանակաշրջանի խնցրի թեկուրներ։ Հրվանդանի Եզրային հատվածներում պահպանվել են նաև վաղերկաթեդարյան պաշտպան-

¹⁷ Փ. Тер-Мартirosов. Античные печи из раскопок Арташата.—«Вестник общественных наук», 1975, № 7.


* Կոչի և Արտաշատի բնակավայրերում պեղումներ է կատարել Գ. Սարգսյանը, Թալինում՝ Ե. Ասատրյանը, Բազմաբերդ 1-ինում՝ Բազմաբերդ 2-րդում՝ Ա. Հակոբյանը։ Վերջին երկու բնակավայրերի խնցրի թանթ է պեղումների ընթացից։ Նաև՝ Ա. Մ. Առաքյան. Работы в Талинском районе. Археологические открытия 1985 г. М., 1987, стр. 557.

¹⁸ Հ. Ե. Միսնիյան, Շամիրամի ֆաղափային 1-ին շերտագրական տեղամասի 1988 թվականի պեղումների արդյունքները.— ՇՄՁ-ում 1983—84 թթ. դաշտային հնագիտական աշխատանքների արդյունքներին նվիրված գիտական նստաշրջան (զեկույցումների թեզիսներ), էջ 15—16, եր., 1985 թ.։

¹⁵ ժ. Գ. Խաչատրյան, Արտաշատ 2, էջ 108, նույնի Գարն V. Տր. 39, Գ. Ա. Կիրազյան. О расписной керамике древней Армении, ИФЖ, 1965, № 3. Древнеармянская расписная керамика.—«Вестник общественных наук», 1970, № 1; Դ. Ա. Խաչատրյան. Кавказская Албания. В кн. Археология СССР Древнейшие государства Кавказа и Средней Азии, т. IV, табл. LXII, рис. 20, 21, 22, 23, М., 1985.

¹⁶ Բ. Փ. Գանդուкевич. Боспорские города (уступчатые склепы, эллинистическая усадьба, Илурат), Л., 1981, стр. 128, рис. 44.

ԿՈՆ. 1-7-ՔԱՂՈՒՄ; ՈՒՆ. 1, 8, 18-ՈՒՆ. 2 ՍԵՆՅԱԿ



նական պարիսպների հետքեր, որոնց վրա անտիկ ժամանակաշրջանի վերաբնակիչները կառուցել են նոր պարիսպներ: Հատկանշական է, որ վաղերկաթեդարյան խցեցեղենի հետքեր ավելի հաճախ գտնվում էին պարիսպների տակ՝ դրսի կողմից և հրվանդանի լանջերից: Ահատվածում բացված մյուս բոլոր շինությունները վերաբերում են անտիկ ժամանակաշրջանին: Պեղումների ընթացքում պարզ դարձավ, որ տեղ-տեղ առկա են անտիկ ժամանակաշրջանի երկու շինարարական հորիզոններ (ֆունկտիոններ), իսկ մուտքի հատվածում, որտեղ ավելի շատ փափուկություններ են կա-

տարվել, նույնիսկ երևի շինարարական հորիզոններ: Վերին շինարարական հորիզոնի (1-ին) կառուցապատման ընթացքում մահրվել են նաև ներքին (2-րդ) հորիզոնի կառույցների մեծ մասը: Բացառված չէ, որ նույն կառույցը կարող էր գոյություն ունենալ ինչպես 1-ին, այնպես էլ 2-րդ շինարարական ժամանակաշրջանների ընթացքում: Պետ է նշել մի հանգամանք, որը մեծապես ազդել է բնակավայրի այժմյան շերտագրական դրության վրա: Դա բնակավայրի գրադեցրած հրվանդանի ժայռոտ-ոտուցիկ ուղիքն է: Կառույցների հիմքերը անմիջապես դրվել են ժայռի վրա, առանց

ՔԱՆՆ-ԵՆԻՏԱԳՐԱԿԱՆ ՏԵՂԱՄՈՒՆ



նախապես փորելու և ամրացնելու, ինչը, ամենայն հավանականությամբ, նպաստել է դրանց հանախակի փլուզմանը և վերականգնմանը: Հրվանդանի դիրքը և ուղիքները բույլ էին տալիս առանց մեծ դժվարության բնակավայրի տարածքը մաքրել և ձորը լցնել փլված կառույցների մնացորդները, որոնց հետ նետվել են նաև այլ իրեր և առարկաներ: Այդ է պատճառը, հավանաբար, որ խորը մշակութային շերտ չի առաջացել (ամենախորը հատվածում այն հասնում է 1,5 մ):

Այսպիսով, Շամիրամի անտիկ բնակավայրի A հատվածում, որը ներկայացնում է նրա առավել խիտ կառուցապատված մասը, բացահայտվել են անտիկ ժամանակաշրջանի երկու (մուտքի տարածքում՝ երեք) շինարարական հորիզոններ՝ շնաշված եզրային հատվածներում տեղ-տեղ պահպանված վաղերկաթեդարյան պա-

վածության վրա բացասական են ազդել նաև 18-րդ դ. սկզբին այստեղ հաստատված վերաբնակիչները, որոնք իրենց բոլոր կառույցները համար օգտագործել են անտիկ բնակավայրերի շինությունների ֆաբրիկ:

* Շամիրամի անտիկ բնակավայրի պահպան-
218


հիսպաների հետքերը: Խեցեղենի բեկորները, որոնք վերաբերում են վաղ երկաթի, հելլենիստական և ուշ անտիկ ժամանակաշրջաններին, ի հայտ են գալիս խաոր վիճակում՝ ինչպես երկրի մակերևույթին, այնպես էլ տարբեր խորություններից: Քնակավայրի շերտագրական պատկերը անելի պարզ երևում է *B* հատվածում: Այնուհետև ևս խեցեղենն ի հայտ է գալիս խաոր վիճակում, բայց բանակական համեմատությամբ բացառապես է, թե որ խորությունում որ ժամանակաշրջանի խեցեղենն է գերակշռում (համեմատվել են անտիկ ժամանակաշրջանի, որպես մեկ ընդհանրական միավորի, վաղ երկաթի և ուշ բրոնզի խեցեղենի բեկորները)¹⁹: Այստեղ անտիկ խեցեղենի բանակական բացարձակ առավելությունը նկատվում է վերին հորիզոններում, թեև դրանք ոչ փչ բանակությամբ ի հայտ կեն գալիս նաև ստորին խորություններից (շերտի խորությունը 180 սմ): Գտնված խեցեղենի մեծ քանակությունը է մի փոքր խումբ, որը կարող է թվագրվել մ. թ. ա. 2—1-ին դարերով: Գրանիտե ստեպանի թասերի և՛ գավաթների, թաս-փիսալների, կարմիր անգորապատ ափսեների, գունագարդ տափաշների և այլ բեկորներ են (աղ. V, 4, 6, 9, 14, 22, 23): Վերջիններս, ամենայն հավանականությամբ, պետք է վերագրել 2-րդ շինարարական հորիզոնին (կամ սենտի 1-ին շինարարական ժամանակաշրջանին): Թեև նրանք խեցեղենի բեկորներ գտնվում էին բնակավայրի տարբեր խորություններից կամ էլ հրվանդանի լանջերից, վաղերկաթե դարյան խեցեղենի հետ միասին: Խեցեղենի գերակշռող մասը, բոտ Առտաշատի, Հազավանի, Դվինի, Կաթնաղբյուրի նմանօրինակների, թվագրվում է մ. թ. 1—2-րդ կամ ուշ անտիկ ժամանակաշրջանով: Գրանիտ կյուր ռոտ-նետուկով փոփած ափսեներ են, անկանթ տանձաձև իրանով սափորներ, ակոսավոր շրթերով կարասներ, ուշ անտիկ ժամանակաշրջանին բնորոշ գունագարդունով կավանդներ: Շամիրամի անտիկ բնակավայրի շերտագրության նման վիճակը (այսօրինակ՝ երբ նույն կառույցը ծառայել է երկու շինարարական հորիզոնների գոյությանը բնթագրում, վերակառուցումների կամ մերափոփությունների հետքեր բացառապես են միայն մի բանի հատվածներում, իսկ մ. թ. ա. 2—1-ին—մ. թ. 1—2-րդ դդ. խեցեղենը հայտնաբերվել է մշակութային շերտի տարբեր խորություններից) թույլ է տալիս ենթադրելու, որ ժամանակագրական ընդմիջում բնակավայրի կյանքում չի եղել կամ եղել է կարճատև: 1-ին շինարարական ժամանակաշրջանի գոյության մասին կարելի է ենթադրել միայն մ. թ. ա. III—I կամ II—I դդ. թվագրվող փոքր բանակությամբ խեցեղենի առկայությամբ, որը շերտագրական կարգ ու կանոնի չի ենթարկվում, այսինքն՝ գտնվել է տարբեր խորություններից

կամ էլ հրվանդանի լանջերից: Այդ պատճառով անտիկ բնակավայրում ի հայտ եկած մեծ քանակությամբ խեցեղենը և դրամը, որոնք թվագրվում են մեր թվարկության սկզբով, չեն բացառում բնակավայրի գոյությունը նաև մ. թ. ա. 1-ին դ.: Գրամը գտնվել է մշակութային շերտից: 30—40 սմ խորությունից: Այն Օգոստոս Օկտավիանոս կայսեր լայն տարածում գտած դրամներից մեկն է, որ հատվել է մ. թ. ա. 2—11 թթ. (արծաթ, դենար)²⁰: Շերտի ընդհանուր խորությունը այս հատվածում 60 սմ է:

Կոչի «Քարհանգի բերդ» (Աշտարակի շրջանի Կոչ գյուղից 1 կմ հարավարևելք) բնակավայրի պեղումների ընթացքում բացվել է երկու սենյակներից և միջանցից բաղկացած բնակարանային համալիր: Շերտագրական դիտումները բացառապես են անտիկ ժամանակաշրջանի երկու շինարարական հորիզոններ և վաղ բրոնզեդարյան մշակութային շերտ: Նշված բնակարանից, որը պատկանում է անտիկ շերտի վերին շինարարական հորիզոնին, և միջանցքում բացված քաղուսից գտնված խեցեղենի մի մասը ներկայացվեց վերևում, Շամիրամի խեցեղենը մեծապես իսկ: Հնարավոր չէ ամբողջական հետևություններ կատարել Կոչի անտիկ բնակավայրի մասին պեղված մեկ բնակարանային համալիրով, թեև այն գտնվում է կենտրոնական մասում: Այնուամենայնիվ, գրոնդված նյութեր (խեցեղեն) թույլ են տալիս հնարավորության սահմաններում որոշ նախնական հետևություններ կատարել՝ կապված խեցեղենի տիպերի և թվագրության հետ: Գտնված խեցեղենի բեկորների մեջ կան կարմիր անգորապատ, գունագարդ խեցեղենի բեկորներ, որոնք անառարկելի աղեսուներ ունեն մ. թ. ա. 3—1-ին կամ կամ 2—1-ին դդ. հույարձաններում հայտնաբերված խեցեղենի հետ (աղ. VI, աղ. VII): Այդ ժամանակով կարող են թվագրվել սրափք ծորակներ, կարմիր փայլեցրած սափորի շուրթը (աղ. VI, 10), նույնպես կարմիր, անգորապատ և՛ փայլեցրած թաս-փիսալայի բեկորը (աղ. VI, 6) և այլն: Հետաքրքիր է լավ մշակված կավից պատրաստված, կարմրավուն հորիզոնական կանթով մեծ տաշտ-կոնքի բեկորը (աղ. VI, 7), որի ընդհանուր ձևը, ցավով, չի վերականգնվում: Հորիզոնական, բայց ակնհայտոր (առանց անցքի) բռնակով մեծ, ուղղահայաց, մի փչ ներս հակված պսակով տաշտ-կոնքի լիքկոր, նույնպես ամուր և լավ մշակված, գտնվել է Շամիրամից (աղ. III, 21): Այսպիսով, Կոչի բնակավայրի վերին շինարարական հորիզոնի թվագրության համար որպես կոպան կարող են հանդիսանալ նշված բնակարանային համալիրից ի հայտ եկած մ. թ. ա. 2—1-ին դդ. խեցեղենի նմուշները, որոնք գուցեհետ ունեն Շամիրամի 2-րդ շինարարական հորիզոնին վերագրվող նյութերի մեջ: Միջանց-

¹⁹ Հ. Սիմոնյան, Եզլ. աշխ., էջ 16:

²⁰ Խ. Ա. Մուշկեյան, Գրամական շրջանառությունը Հայաստանում, Եր., 1982, էջ 313:



ֆում բացված բաղուսից գտնված իրերը լավ քվազրվում են Արտաշատի մ. ք. 1—2-րդ դդ. նյութերով (ադ. III, 5, 1)²¹:

Քալինի շերտագրական տեղամասում, վաղ միջնադարյան խիստ դասավորված բաղունների տակ բացվեց անտիկ խեցեղենով և շինանյութերով մշակութային շերտ²², Այնտեղից ի հայտ

եկած խեցեղենը (ադ. VII, ադ. IX) իր հիմնական առանձնահատկություններով անընթաց է կոշի, Շամիրամի մ. ք. ա. 2—1-ին դդ. խեցեղենի հետ, քեև որոշ կավանոթներ կարող են վերաբերել մ. ք. 1—2-րդ դարերին: Աչի է զարևում Քալինի անտիկ խեցեղենի խիստ բարձր որակը: Ժամանակագրական եույն շրջանակի մեջ են տեղադրվում նաև կոշ-Քալին գծի վրա գտնվող Բազմաբերդ—1, Բազմաբերդ—2 բնակավայրերի խեցեղենի նմուշները²³: Անտիկ

²¹ Տ. Գ. Խաչատրյան, Արտաշատ—2, ադ. XI, 1:

²² Ե. Ա. Ասատրյան, Раскопки Талинского некрополя, АО, 1985, стр. 560, М., 1987.

²³ Ա. Մ. Այոպյան, Работы в Талинском районе, АО, 1985, стр. 557 М., 19.



Նկ. 1

բնակավայրի հետեւ հայտնաբերվել են նաև Արագածի հյուսիս-արևելյան նախալեռնային գոտում, Արտաշատի վաղ բրոնզեդարյան բնակավայրի վերին հորիզոններում: Այստեղից գտնված խեցեղենը խիստ բեկորային վիճակում է, աչքի է ընկնում մի քանի նկարային և ցածր որակով (աղ. X): Պեղվել է բնակավայրի փոքրիկ մի հատվածը:

Արագածի հարավային նախալեռնային գոտու անտիկ ժամանակաշրջանի տարբեր բնակավայրերից գտնված խեցեղենի ներկա բնորոշումը թույլ է տալիս նաստատելու դրա, հիմնականում, միասնությունը և, հետևաբար, միաժամանակությունը: Որոշակիորեն ուրվա-

գծվում է նաև իրար մոտ գտնվող բնակավայրերի այս խմբի և Հայաստանի անտիկ ժամանակաշրջանի բաղաձայնի կապը: Մեզ հետաքրքրող ռեզիդուում անտիկ ժամանակաշրջանի ոչ բաղաձայն բնակավայրերի առաջացումը, գոյությունը և անկումը, հավանաբար, կարելի է կապել Հայաստանում մ. թ. ա. 2-1-ին դդ. սկսված բաղաձայնության (ուրբանիզացիա), նրա ընթացքի և թուլացման հետ: Այստեղ, անտիկ ժամանակաշրջանին հաջորդած նոր սոցիալ-բաղաձայն պայմաններում, առաջացան վաղ միջնադարյան բնակավայրեր (Աղջ, Կոշ, Արուն, Վախրի բերդ), Թալին և այլն):

Հ. Ա. ՕՂԱՆՅԱՆ